

այն ատեն տակաւին պարսկական էր, կաթողիկէ հայ ծնողքէ, եւ մկրտուած Տէր Յովհ. Խօջայով քահանայէ, որ Առաքելական միսիոնար էր այնտեղ: Իր պապն էր՝ Տէր Գրիգոր Աւագ քահանայ, որ առաջին անգամ ի Բուլթայիս մտցուց կաթողիկէութիւնը: Անտոն յետոյ Պոլիս գացած է, եւ այնտեղ ուսում առնելով՝ Արարկիրի Իգնատիոս Արքեպիսկոպոսէն, որ ի վաղուց կաթողիկէ եղած էր եւ ասոր համար Հայոց Պատրիարքէն Պոլիս բերուած եւ 1789ին Զաքարիա-Պատրիարքին հալածանքներուն ենթարկուած, 1790ին քահանայ եւ վարդապետ ձեռնադրուած էր: Տարի մ'ետքը Մոստոկի (ուսսական) կաթողիկէ հայ ժողովուրդը զինքը իբր հովիւ հրաւիրեց. ինքն ալ Պոլսոյ Առաքելական Նուիրակ Անտոն Փրանկ. Գրակիա Արքեպ.ին հրամանաւ 1792 Յունուար 20ին Մոստոկ եկաւ, եւ 1792 Ապր. 3ին ուսս կառավարութեան հրահանգին համեմատ՝ հաւատարմութեան երդում տուաւ, եւ Ռուսաց պետութեան մշտնջենական հպատակ ընդունուեցաւ:

Հինգ տարի ետքը պատկանեալ իշխանութենէն հրաման ստանալով՝ ծննդավայրը՝ Պարսից կողմերը գնաց իբր Առաքելական միսիոնար, եւ անցնելով Ռուսաց երկիրը՝ Աստրախանու եւ «Բոլոր ուղղափառ բնակչացն կովկասու հոգեւոր կառավարիչ», անուանուեցաւ Հռոմայ Ս. Ժողովոյ առանձինն հրամանագրով: Այստեղ մնաց ութ տարի: